ես մի նամակ գրեմ, ասել է եպիսկոպոսը, և միութեան անդամների թիւը չափազանց կը մեծանայ։ Կալուածական միութեան և եկեղեցու մէջ մեծ նմանութիւն կայ, թէ. պէտ առաջինը մարդկային մի ընկերութիւն է, իսկ երկրորդը կազմիւ է Աստուծոյ կամքով։ Եթէ կալուածական միութիւնը վտանգի ենթարկվի և ոչնչանայ մի տեղ, այն ժամանակ նա օգնութիւն կը գտնի ամբողջ աշխարհի իրլանդացիներից։" Եպիսկոպոսի այդ ճառից երևում է, որ կալուածական միութեան հրամանը իրլանդացիների համար նոյնպիսի օրէնք է, ինչպէս և եկեղեցու հրամանը քրիստոնեայ աշխարհի համար։ Ուշադիր քննողները կարող են նկատել, որ Իրլանդիայի մէջ հարցը այնքան կալուածական միութեանը և նրա ձգտումներին չէ վերաբերում, որքան այդ կաթոլիկական կղզին բողոքական Անգլիայից բաժանելու ցանկութեանը։ Կալուածական միութեան իսկական գործիչները միշտ ընդդէմ են եղել բռնութեանը և սպանութիւններին։ Կասկածում են, որ կան գաղտնի ընկերութիւններ, որոնք պահանջում են ջարդել կալուածատէրերին, որպէս զի ընդհանուր ապստամբութիւն ծագի և այդ ճանապարհով Իրլանդիան ինքնավարութիւն ստանայ։ Գլադստոնի կառավարութիւնը սառնասրտութեամբ է վերաբերվում այդպիսի ենթադրութիւններին մի կողմից այն պատճառով, որ նա չէ կամենում լսել պահպանողականների խորհուրդը և երկրի մէջ սարսափ դցել, իսկ միւս կողմից Գլադստոն վճռել է ճշգրութեամբ կատարել իր բոլոր խոստումները և հաւատարիմ մնալ իր մարդասէր սկզբունքներին։

Իրլանդական վարչութիւնը արգելեց բաւական շատ կալուածական ժողովներ։ Ցնստերի պոլիցիան տեղեկութիւն է ստացել, որ Ամերիկայի ֆենիները ուղարկել են Անգլիա իրանց գործակատարներին հասարակական շինութիւնները քանդելու համար։ „Daily News" ազատամիտ լրագիրը նկատում է, որ Լիվերպուլի մէջ կատարված յանցանքը շատ նշանաւոր գործ է և նրա վրա պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել։ Ակներև է, որ ռումբի մէջ դինամիտ է եղել և որ յանցաւորները ֆենիներ են։ Իրլանդիայի դրութիւնը լրագրի կարծիքով, յուսահատեցնող է։ „Times" լրագիրը մի ծանր առաջնորդող յօդուածով աշխատում է մեկնել իրլանդական դժուարութիւնների վտանգը և այն եզրակացութեան է հասնում, որ ֆենիների և կալուածական միութեան գործած բռնութիւնները պէտք է նոյնպիսի բռնութիւններով ճնշվին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից հեռագրում են որ իշխան Բիսմարկի առողջութիւնը լաւանում է։

—Վիէննայից հեռագրում են որ բոլգարական մինիստր Էյնրօտ հրաժարական կը տայ իր պաշտօնից ազգային ժողովի բացվելուց յետոյ։

—Ֆրանսիական սենատը ընդունեց ժողովների ազատութեան մասին նոր օրէնքը, մացնելով նրա մէջ պատգամաւորների ժողովի կողմից առաջարկված փոփոխութիւնները։ Արմատական կուսակցութեանը պատկանող Տօլէն առաջարկեց վերաքննել ֆրանսիական սահմանադրութիւնը։ Առաջարկութիւնը չընդունվեցաւ։

—Նորերումս, ինչպէս հաղորդում է «National» լրագիրը Փարիզի Սէն-Ժէրմէն արուարձանի մէջ փորձ է եղել վառօդով ճայթեցնել թիւերի արձանը։ Արձանը փոքր ինչ վնասվեցաւ։

—Արժիրիայում ապստամբվեցաւ արաբների մի ցեղ։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են որ այս օրերս վախճանվեցաւ Ալժիրիայում, որտեղ նա գնացած էր օդափոխութեան համար, երեսուն ֆրանսիացի երաժիշտ ջութակ ածող Էնրի Վիէտան, 61 տարեկան հասակում։ Նա ծնվեցաւ Վերվիէի մէջ և արդէն 8 տարեկան հասակից կօնցէրտներ էր տալիս։ Նա յայտնի էր ոչ թէ միայն որպէս երաժիշտ ածող, բայց ունի բազմաթիւ երաժշտական գրուածներ։

—«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ Նորերումս ֆարիզում բժշկապետի դիպլոմ ստացել են տասն և երկու կանայք։ Նրանցից ամենաւելները համարվում են՝ ամերիկուհի Պուտման, իտալուհի Բօզէտտի և ռուս օրիորդ Գօնչարովա։ Փարիզի բժշկուհիների մէջ գտնվում են երեք ֆրանսուհիներ, որոնցից մէկը, Մագդալինա Բրէս, գործում է Փարիզում, իսկ մնացած երկուսը հրաժարվեցան բժշկապետների հետ մրցել։ Տիկին Բրէս այրի է, երկու որդիք ունի. նա «ակադէմիայի դօցէնտ» կոչումը և Շատլէ թատրոնի բժշկապետի կոչում ստացաւ։ Ներկայումս, Փարիզի բժշկական ֆակուլտէտում պարապում են՝ երեք ամերիկուհիք, 18 անգլիուհիք, 11 ֆրանսուհիք, 10 ռուսուհիք, բոլորը 42 կանայք։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս Փարիզում, Հաուսման բուլվարի բանկիր Արակսէլին ներկայացաւ մէկ լաւ հագնված երիտասարդ, ստորագրութեան թերթը ձեռքին յօգուտ աւստրիական Հարնանսդօրֆ փոքրիկ քաղաքի այրվածների։ Արակսէլ արդէն կամենում էր ստորագրել, բայց ստորագրութիւնների թւում բանկիր Դրէյֆուսի ստորագրութիւնը նկատեց, որը նրան կեղծ երևեցաւ։ Նա երիտասարդ մարդուն խնդրեց մի փոքր սպասել, իսկ ինքը դուրս գնաց և մարդ ուղարկեց պոլիցիականին կանչելու։ Երբ պոլիցիականը եկաւ, այն ժամանակ չփոթված երիտասարդը խոստովանվեց, որ ստորագրութիւնների մեծ մասը ինքն է կեղծել։ Նրա անունը Մորիս Մայէր է, և արհեստաւոր է։ Ի հարկէ, նրան իսկոյն պոլիցիա տարան։

* * *

Մայիսի 28-ին Փարիզում, Շարրա փողոցի վրա, Ֆիլիպպ Հէրցի դահլիճում, ֆրանսիական գրողների, քաղաքական գործողների և արտիստների մեծ բազմութիւն հաւաքվեցաւ։ Ժողովի նպատակն էր քննել ի պատիւ Վիկտոր Հիւգօ արձան կանգնեցնելու նախագիծը, որի համար ստորագրութեամբ փոզեր են հաւաքում Ֆրանսիայում և արտասահմանում։ Այդ ժողովը կայացաւ հրաւիրմամբ ժամանակաւոր յանձնաժողովի, որի նախագահ է Լուի-Բլան։ Յանձնաժողովը առաջարկում էր 30 անձերից բաղկացած մէկ մասնաժողով կազմել։ Բայց ժողովը գտաւ, որ այդ թիւը քիչ է. և կրկնապատկեց նրան։ Լուի-Բլան հիւանդութեան պատճառով հեռացաւ ժողովից, և նախագահի տեղը բռնեց Ա. Դելա-Ֆօրժ։ Օտարականներից Վիկտոր-Հիւգօի արձանը կանգնեցնելու յանձնաժողովում միայն Կրաուֆօրդ է ընտրված։ Մասնաժողովի թղթակից-անդամներ ընտրված են. Տէնիսօն, որը ի պատիւ Վիկտոր-Հիւգօի մէկ օճնէա գրեց Անգլիայում, Կաստելիար Սպանիայում, Տուրգենէվ Ռուսաստանում, Գարիբալդի Իտալիայում, Անրի Կոնսիանս Բէլգիայում և այլն։ Յանձնաժողովի պատուաւոր նախագահ կամենում էին Գրէվիին ընտրել, բայց հանրապետութեան նախագահը պատասխանեց այդ առաջարկութեանը, որ իր պաշտօնը չէ թոյլ տալիս իրան այդպիսի պատիւներ ընդունել։ Արձանի բազմաթիւ նախագիծներ և մոդէլներ են առաջարկված։

* * *

Բերլինում մատդրութիւն կայ 1882 թ-ին մէկ նոր թատրոն շինել, այն է գերմանական «Ազգային թատրոն», որը Գերմանիայի համար նոյն նշանակութիւնը կունենայ, ինչ որ ունի Փարիզի «Théâtre francais» Ֆրանսիայի համար։

* * *

Ամենամեծ և ամենաթանգ հեռագիր, անկասկած ուղարկված էր «Chicago Times» լրագրին ներկայ թ-ի մայիսի 9-ին։ Ամերիկացիք սաստիկ հետաքրքրված են նոր կոնակարանի թարգմանութեամբ, որ լոյս է տեսել Օկսֆօրդում և Կէմբրիջում, այնպէս որ 800,000 օրինակի ստորագրվեցան։ Իր ընթերցողներին դիւրութիւն տալու համար, որ կարողանան համեմատել նոր թարգմանութիւնը հնի հետ, հէնց նոյն օրը, երբ նոր գիրքը Լոնդոնից Նիւ-Եորկ ստացվեցաւ, «Chicago Times» խնդրում էր հեռագրով ուղարկել բոլոր աւետարանիչներից մի քանի գլուխներ, բոլորը 83,715 խօսք։ Հեռագիրը, այդպիսով, պէտք է որ մեր փոզով արժենար 50,000 բուբլուց աւելի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

նաւոր դեր չեն տուել, այլ միշտ երկրորդական, երրորդական դերեր։ Թէ ինչ վիրաւորանք է այս դերասանի համար, որը արհեստին է ծառայում և ոչ թէ փողին, հասկացողը կը հասկանայ. այդ նշանակվում է դերասանին սպանել։ Վերջապէս նշանակվում է «Քոյր Թերեզա» իմ բենեֆիսին մարտի 2-ին։ Սովորութիւնից դուրս ես չեմ կարողանում ուղարկելու համար կամեցած տոմսակներս ստանալ և շատ պարոններ ինձանից տոմսակ են խնդրում, որովհետև կասսայում չեն կարողանում տոմսակ առնել, ծախված լինելու պատճառով։ Մարտի 1-ին երեկոյեան գնում եմ թատրոն և տեսնում եմ կասսայում, որ տոմսակներով լիքն է, տոմսակների մեծ մասը չեն ծախել..... Թագաւորի մահուան պատճառով բենեֆիսը յետաձգվում է, և ապրիլի 18-ին սկսուեցան ներկայացումները։

Ես բենեֆիս չեմ ստանում, բենեֆիս ստանում է օր. Ե. Գ. վերջը նշանակվում է օր. Վ. Գ. բենեֆիսը։ Իմանում եմ, պ. Անակիանը, պ. Ադամեանը պիտի ստանան երկրորդ բենեֆիսներ։ Իշխան Ամատունին ասում էր, ինչ անեմ որ ձեզ համար օր չէ մնում, որ ձեր բենեֆիսը նշանակեմ։ Իմ ասածների փոխարէն ուսերն է բարձրացնում նա։ Ես մնում եմ զարմացած։ Պ. Ս-ից պահանջում եմ բացատրութիւն։ Նա ասում է թէպէտ և անարդար է, որ ներկայացումները սկսելուն պէս ձեզ չը նշանակեցին բենեֆիս, բայց ում բենեֆիսը առաջ պէտք է լինի, այդ մասին պայմանագրում ոչինչ չը կայ, դուք պայմանագրով պարտաւորված էք մինչև մայիսի վերջը ներկայացումներին մասնակցել, մասնաժողովը պարտաւոր է ձեզ գեթ մէկ բենեֆիս տալու, սպասեցէք մինչև վերջը, եթէ չը տայ, այն ժամանակ կարող էք պահանջել, ուրեմն համբերութիւն։ Ես համբերեցի։ Ապրիլի 22-ին գնում եմ իշխան Ամատունու մօտ և բենեֆիսի հաշուին փող եմ խնդրում։ Նա մարտ ամսի ռօճիկը սրբել է տալիս և գրել է տալիս ինձ «մայիս ամսուայ ռօճիկը ստացայ»։ Ես պայմանագիր չունեմ և չը գիտեմ էլ թէ ինչ է գրուած մէջը, ստորագրում եմ յիշելով պ. Ս-ի խօսքերը, բայց ինքս ինձ զարմանում եմ թէ ինչու իշխանը բենեֆիսի հաշուի տեղ մայիս ամիսն է գրել տալիս։ Միւս օրը ինձ ասում են, որ իշխանը ամենին յայտնում է, որ ինձ բենեֆիս տալու պարտական չէ, և թէ ես 300 ր. ստացել եմ. այդ ինձ չփոթեցնում է։ Պ. Ս-ից հարցնում եմ, թէ այս ինչ է նշանակում։ Նա չէ հաւատում, և ասում է՝ գնացէք վերջապէս և կարդացէք ձեր պայմանագիրը։ Ես մի նամակով խնդրում եմ իշխանից իմ պայմանագրիս օրինակը. անցնում են օրեր չեմ ստանում։ Գրում եմ կրկին մի նամակ և ստանում եմ ապրիլի 30-ին կէսօրից յետոյ իմ պայմանագրիս օրինակը, բայց առանց ստորագրութեան։ Կարդում եմ պայմանագիրը և զարմանում եմ միջի գրածների վրա։ Գնում եմ իսկոյն պ. Ս-ի տունը և խնդրում եմ որ կարդայ իր միջնորդութեամբ արած պայմանագիրը։ Նա նայում է թղթին և մնում է ապշած։ 9-րդ յօդուածը ասում է, բենեֆիսի փոխարէն օր. Աստղիկը ստանում է 300 ր.։ Պ. Ս. ասում է այդ սխալմունք է, այդ անկարելի է, սխալ է դուրս գրած, դուք պէտք է բենեֆիս ստանաք, իշխանը ինձ երբէք չէ ասել, որ դուք բենեֆիս չունէք, ապացոյց մարտի 2-ի աֆիշան։ Վերջին յօդուածը ասում է, եթէ օր. Աստղիկը խախտէ պայմանագիրը, վճարում է իշխան Ամատունուն 500 ր. տուգանք, բայց եթէ իշխանը խախտէ, այդ մասին ոչինչ չը կայ գրած։ Զարմանալի բան։ Մի յօդուած ասում է որ պայմանագրի ժամանակը լրանում է ապրիլի վերջին։ Հարցնում եմ պ. Ս-ից արդեօք իմ պայմանագրիս ժամանակը երբ է լրանում, նա պատասխանում է. այդ պայմանագրի զօրութիւնովը ապրիլի վերջին։ Հապայ ինչու։ Իշխանը գիտէ որ պայմանագրի ժամանակը ապրիլին լրանում է, ոչ բենեֆիս է տալիս ինձ, ոչ էլ բենեֆիսից ինձ հասնելիք գումարը, այլ գրել է տալիս պայմանագրից դուրս մայիսի ռօճիկ։ Նա պատասխանում է. այդ չը գիտեմ, միայն այսօր ապրիլի 30-ն է, դուք պարտաւոր էք «Կովերլէի սպանման» ներկայացումին մասնակցել, իսկ մայիսի մէկին գնացէք իշխանի մօտ և խօսեցէք այդ մասին։ Երեկոյեան ես բեմ եմ դուրս գալիս, հասարակութիւնը ինձ շատ լաւ ընդունում է։ Անտրակտում ինձ բեմ են դուրս կանչում, բայց ինչպէս շատ անգամ, այս անգամ էլ վարագոյրը չէ բարձրանում, որովհետև ինձ համար արգելքներ չեն պակասում։ Մինչև անգամ տեսնում եմ, որ մասնաժողովին մօտիկ մի երկու պարոններ աշխատում են բեմ դուրս գալս խանգարել սուլելով, որտեղ ի հարկէ հասարակութիւնը մասնակից չէ։ Ես գալիս եմ տուն տեսածներիցս վիրաւորված, հաստատ էլ իմանում եմ որ ամբողջ մայիս ամսին ինձ բացի օր. Վիրգինէի բենեֆիսին նշանակած «Պառաւ կնոջ» դերից սուրիշ դեր չեն տալու, և տեսայ որ «մայիսի ռօճիկը ստացայ» ստորագրել եմ, բայց մինչև ապրիլի վերջը ոչ բենեֆիս եմ ստացել, ոչ էլ բենեֆիսից մընացած գումարը, և ոչ էլ այդ մասին մի ստորագրութիւն ունեմ ձեռքումս իշխանից։ Ես իշխանի մօտ գնալու տեղ, գրեցի մի նամակ, որի մէջ ես ապահովութիւն էի խնդրում. իմ նպատակն էր, քանի որ պայմանագիր չունէի, մի ստորագրութիւն ստանամ, որպէս զի ինձ մի բենեֆիս նշանակեն և դերեր տան վերջապէս։ Իսկ թէ այդ անելու չեն, այլ կամենում են ինձ 150 ր. տան և ես չը խաղամ, այն ժամանակը ինչու մասնաժողովից բոլոր 150 ր. ստանամ, մոռ 150 ր. նշանակած ռօճիկը հանեն իմ բենեֆիսի փողից. այդպիսով էլ մասնաժողովին կը մնայ 150 ր., և ես էլ աւելորդ տեղը մէկ ամիս էլ աւելի չեմ վիրաւորվի։ Այս դիտաւորութեամբ գրեցի իմ նամակս։ Փոխանակ ինձ պատասխանելու, կամ ինձ հետ խօսելու, մասնաժողովը լռում է, և վերջը թատրոնի պատերին յայտնի յայտարարութիւն է կպցնում։ Զարմանալի է, որ մասնաժողովը հէնց ում զրկել է, նրանից է այդպէս շատ վիրաւորվում. զարմանալի է, որ իմ երկու տարուայ մէջ տարած փողերս մնծացրած տեսնում են, իսկ ուրիշի հինգ ամսոյ մէջ տարած կրկնապատիկը չեն տեսնում։ Խընդրում եմ դատեն և տեսնեն—կարող էի ես աւելի տանել, քան թէ տարել եմ։ Արդեօք միւսներից պակաս ռօճիկ ստանալը, երեք ամսուայ ռօճիկից հրաժարվելը, դերերից զրկվելը (թողնենք ուրիշ վիրաւորանքները) մէկ բենեֆիս նշանակել և այն էլ անպատուելով զրկվելը իմ կողմից պարտազանցութիւն է։ Մէկ պարտազանցութիւն պէտք է անէի, բայց չարեցի, որովհետև հարկաւոր չեղաւ։ Դեկտեմբերին օր. Սիրանոյշը բենեֆիսին կամենում էր որ եկամուտը իրեն տան, իշխանը չէր համաձայնում. քոյրս չէ կամենում խաղը շարունակել և գալիս է ինձ յայտնում է։ Ես իմ քրոջս ասում եմ, եթէ նա չը խաղայ, ի հարկէ ես էլ չեմ խաղայ։ Քոյրս գընում է իշխանի մօտ, և իշխանը տալիս է նրան բենեֆիսի եկամուտը։ Այդ այդպէս լուութեամբ վերջանում է։ Հարցնում եմ ամէն բարեմիտ և արդար մարդուց, հարցնում եմ ամէն դերասանից, արդեօք իմ տեղս նրանք ինձանից աւելի լաւ կը վարվէին, արդեօք նրանք ինձանից աւելի կը դիմանային։ Ձեռքս խղճիս վրա դրած ասում եմ, որ ես աւելի արեցի քան թէ պարտաւոր էի։ Պարծենում են, որ ինձ կարող են վնասել, և վնասեցին։ Խոստովանվում եմ, որ ինձ վնասեցին և կարող են վնասել, բայց ես գնում եմ և տանում եմ ինձ հետ երկու բան, որ չեն կարող ինձանից խլել՝ իմ արհեստս և իմ պատիւս։ Արդարութիւնը վերականգնել չար յարձակումների դէմ, երբէք ուշ չէ։

Ա. Աստղիկ